

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, ամրագրելով անձի դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը, սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Հետևաբար, արդյունավետությունն առաջին հերթին պետք է դիտել դատական պաշտպանության իրավունքի իրականացման սահմանադրաիրավական և կոնվենցիոն¹ պահանջ, որը բովանդակային առումով ներառում է նաև ՀՀ Սահմանադրության մեկ այլ 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի օրգանական և գործառական (ֆունկցիոնալ) տարրերի տարողունակությունը: Հարկ է նշել, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի կոնվենցիոն մասն են ու մեկ համալիր իրավունք են: Այն յուրաքանչյուրին երաշխավորում է ոչ միայն դատարան դիմելու իրական հնարավորություն, գործի քննության ընթացքում որոշակի որակներ ու դատավարական այլ գործիքակազմ, ապահովում դատավարական երաշխիքների պահպանմամբ հաստատված փաստերի նկատմամբ նյութական համապատասխան նորմերի կիրառում, կայացված դատական ակտի կատարում, այսինքն՝ խախտված իրավունքների վերականգնում, այլև երաշխավորում է դատական հնարավոր սխալի կամ արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ տարրի խախտման վերացման հնարավորություն²: Ընդ որում, հատուկ ուշադրության պետք է արժանացնել այն հարցը, թե կոնվենցիոն դրույթները որպես Սահմանադրության 5-րդ հոդվածով նախատեսված անիջականորեն գործող

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (4-ը նոյեմբերի 1950 թ., Հոմ, ՀՀՊՏ 2002.06.05/17 (192)) 6-րդ և 13-րդ հոդվածները:

² Տե՛ս **Չ. Մ. Տեր-Վարդանյան**, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2009, էջ 11:

իրավունք, որքանով են կայուն իրավունքների պաշտպանության դատավարական կառուցակարգերին ներկայացվող որակական պահանջներ ու իրավական այլ երաշխիքներ սահմանելիս: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ամրագրել է, որ Կոնվենցիան կենդանի «գործիք», օրգանիզմ է և պետք է մեկնաբանվի տվյալ պահին գոյություն ունեցող պայմանների և իրողությունների լույսի ներքո՝ հաշվի առնելով ժամանակի ընթացքում հասարակական հարաբերությունների զարգացման որակական փոփոխությունները³: Նույնանման մոտեցում է ամրագրված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի⁴ 68-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանը վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին և վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումները համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Ստացվում է, որ կոնվենցիոն կամ սահմանադրական իրավաբանական փոփոխությունները ոչ միայն հնարավոր են, այլև ուղղված են *իրավունքի գերակայության համընթացության* ապահովմանը: Հետևաբար, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի գնահատման կոնվենցիոն և սահմանադրաիրավական որակական չափորոշիչները ժամանակի ընթացքում, հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, կարող են իրավաբանական փոփոխությունների ենթարկվել՝ միաժամանակ կանխորոշելով դրանց բնույթն ու պրոցեսուալ առանձնահատկությունները:

Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերին ներկայացվող իրավական պահանջները կարելի է դասակարգել տարբեր չափանիշներով՝ ելնելով իրավական ամրագրման աստիճանակարգությունից, գործողության տարածականությունից կամ շրջանակներից և այլն: Սակայն, մեր կարծիքով, գործնականում կարևոր է ընդհանուր և հատուկ բնույթի պահանջների

³ St´u Matthews v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 18.02. 1999 թվականի վճիռը (կետ 39), Tyrer v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 25.04.1978 թվականի վճիռը (կետ 31), LOIZIDOU v. Turkey (preliminary objections) գործով Եվրոպական դատարանի 23.03.1995 թվականի վճիռը (կետ 71):

⁴ Ընդունվել է 17.01.2018 թ., չՕ-42-Ն:

տարանջատումը, ինչը հնարավորություն կընձեռի կոնկրետ գնահատական տալու քաղաքացիական դատավարության տեսակին կամ կառուցակարգին՝ բացահատելով դրա բնույթն ու արդյունավետության աստիճանը: Ըստ այդմ՝ ընդհանուր պետք է համարել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանն ուղղված միջազգային ու ներպետական նորմերով սահմանված և երաշխավորվող այն իրավադրույթների համակցությունը, որը դատավարության մասնակիցների համար ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան առանց խոչընդոտի դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում, ապահովում է հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է արդար դատաքննության իրավունքի տարրերի խախտումները վերացնելու հնարավորություն՝ բացառելով դատական պաշտպանության իրավունքի խախտումը⁵:

Հատուկ կանոնները, թելադրված քաղաքացիական դատավարության տեսակի կամ կառուցակարգի գործառույթային արդյունավետության ապահովման անհրաժեշտությունից, որակական հատուկ պահանջներ և իրավական երաշխիքներ են սահմանում հատուկ պահպանվող արժեքների, անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար⁶:

Միայն ընդհանուր և հատուկ կոնվենցիոն և սահմանադրաիրավական պահանջներին ու որակներին համապատասխանող քաղաքացիադատավարական կառուցակարգերը կարող են իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ապահովել անձանց համար և երաշխավորել դատավարական կարգավորման իրավականությունը: Ընդ որում՝ իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերը գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել իրավականության կանխավարկածով: Օրենսդրական կարգավորումը կամ դատավարության տեսակի՝ օրենքով նախատեսված լինելու հանգա-

⁵ Տե՛ս Եվրոպական դատարանի *Hornsby v. Greece* գործով 27 սեպտեմբերի 1996 թ., 27 հունվարի և 25 փետրվարի 1997 թ. վճիռներ, Եվրոպական դատարանի *Prince Hans-Adam II of Liechtenstein v. Germany* գործով 12 հուլիսի 2001 թ. վճիռ, կետ 43, *Waite and Kennedy v. Germany*, 18 փետրվարի 1999 թ. վճիռ, կետ 50, *Helmers v. Sweden* գործով 29 հոկտեմբերի 1991 թ. վճիռ, կետ 29, *De Wilde, Ooms and Versyp v. Belgium* 18 հունիսի 1971 թ. վճիռ, կետ 12, *Neumeister v. Austria*, *Raugeisen v. Austria (Merits)* 16 հունիսի 1971 թ. վճիռ, կետ 95, *Van de Hurk v. Netherlands* 19 ապրիլի 1994 թ. վճիռ, կետ 45 և այլն, ինչպես նաև **Հ. Մ. Տեր-Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 11-12:

⁶ Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում:

մանքը իրավականություն ենթադրում է այնքան ժամանակ, քանի դեռ ՀՀ սահմանադրական դատարանը քաղաքացիադատավարական կառուցակարգն ամբողջությամբ կամ մասնակիորեն հակասահմանադրական չի ճանաչել, կամ Եվրոպական դատարանը չի արձանագրել կոնվենցիոն դրույթների և պահանջների խախտման փաստը: Հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) դիրքորոշումն առ այն, որ Կոնվենցիան պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ դատարանները կարողանան արդյունավետորեն ապահովել 6-րդ հոդվածի պահանջները, իսկ դրանց ժամանակավոր խախտումը չի հանգեցնի պետության պատասխանատվության, եթե պետությունը ձեռնարկում է նմանաբնույթ իրավիճակը շտկելուն ուղղված անհապաղ արդյունավետ գործողություններ⁷: Հետևում է, որ դատավարական ընթացակարգերի կիրառման արդյունավետությունը և կոնվենցիոն պահանջներին համապատասխանությունն ապահովելու պատասխանատվությունն ամբողջապես կրում է պետությունը, որից վերջինս կարող է ազատվել, եթե *անհապաղ* ձեռնարկել է հետագա խախտումները բացառելուն ուղղված *արդյունավետ* միջոցներ, որպիսին գնահատելու իրավասությունը վերապահված է Եվրոպական դատարանին: Այսպես, Եվրոպական դատարանը *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* գործով կայացրած № 2 (№ 33509/04), 15.01.2009 թ. վճռի եզրափակիչ մասով պատասխանող պետությանն ուղղակիորեն պարտավորեցրել էր վեցամսյա ժամկետում դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված կոնվենցիոն սկզբունքների մեկնաբանությունների հիման վրա իրավունքների պաշտպանության ներպետական այնպիսի միջոցներ կամ դրանց համադրման կառուցակարգեր ներդնել, որոնք ազգային դատարանների վերջնական դատական ակտերը չկատարելու կամ ոչ ժամանակին կատարելու պարագայում կողմերի համար համարժեք և բավարար հատուցում կապահովեն:

Արդարադատության գլխավոր նպատակը մարդու իրավունքների և ազատությունների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունն է, որը օրենքի ֆորմալ իրացման արդյունքում կարող է չիրականանալ: Քաղաքացիադատավարական կառուցակարգերն առաջին հերթին պետք է լիարժեքորեն ապահովեն մարդու իրավունքների և ազատությունների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունը, այն էլ բացառապես կոնվենցիոն և սահմանադրաիրավական պահանջներին, որակներին և ընկալումներին համա-

⁷ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, գիտական խմբագիր՝ Գ. Հարությունյան, Եր., 2005, էջ 212-214:

պատասխան: Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայից բխում է, որ Եվրամիության և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները կաշկանդված են մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների գերակայության սկզբունքով, ուստի ազգային դատարանը գործի քննության ընթացքում պետք է անդրադառնա իրավունքի գերակայության սկզբունքի և կիրառվող օրենսդրության համատեղելիությանը՝ նախապատվությունը տալով իրավունքի գերակայությանը⁸: Ստացվում է, որ քաղաքացիադատավարական կառուցակարգի օրենքով նախատեսված լինելու հանգամանքը առերևույթ վկայում է դրա իրավականության մասին (իրավականության կանխավարկած), իսկ դատարանն էլ՝ որպես իրավակիրառ մարմին, պետք է անդրադառնա իրավունքի գերակայության սկզբունքի և կիրառվող օրենսդրության համատեղելիությանը՝ նախապատվությունը տալով իրավունքի գերակայությանը, կոնվենցիոն և սահմանադրաիրավական պահանջներին և որակներին՝ որպես անմիջականորեն կիրառվող իրավունքի: Պետք է փաստել նաև, որ կիրառվող նորմի սահմանադրականության վերաբերյալ կասկածների առկայության դեպքում, եթե դատարանը ՔԴՕ 157-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կարող է դիմել ՀՀ սահմանադրական դատարան, ապա կոնվենցիոն դրույթների մեկնաբանման և քաղաքացիադատավարական կառուցակարգի համադրելիության խնդրով Եվրոպական դատարան դիմելու հնարավորությունը սահմանափակ է, քանի որ այդպիսի գործիքակազմից օգտվել Կոնվենցիայի 16-րդ արձանագրության⁹ ուժով կարող են միայն բարձրագույն ատյանի դատարանները, իսկ ցանկացած այլ իրավական նորմի մեկնաբանման նպատակով ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու հնարավորություն ընդհանրապես չկա:

ՀՀ օրենսդրությունը բացառում է ստորադաս դատական ատյանում քաղաքացիական գործի քննության ժամանակ կիրառման ենթակա իրավական նորմի վերաբերյալ վճռաբեկ ատյանի մեկնաբանություն տալու հնարավորությունը, ինչը օրենքի միատեսակ կիրառության բավականին գործուն կառուցակարգ է այնպիսի զարգացած իրավական համակարգ ունեցող եվրոպական երկրում, ինչպիսին Ֆրանսիան է: Այսպես, այդ երկրի քաղաքացիական դատավարության օրենսգրքի II հատորի VI գլխի 1031-1.- 1031-7. հոդվածները սահմանում են քաղա-

⁸ Տե՛ս **Нешатаева Т. Н.** Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт. М.: Городец, 2007, էջ 53, ինչպես նաև՝ **Микеле де Сальвиа.** Прецеденты Европейского суда по правам человека. СПб., 2004, էջ 53:

⁹ ՀՀ-ի կողմից այն վավերացվել է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին, ուժի մեջ է մտել 08.01.2018 թ., որով երաշխավորել է Արձանագրության 10-րդ հոդվածին համապատասխան նշանակված Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատարանների ՄԻԵԴ դիմելու իրավունքի իրացումը՝ Կոնվենցիայով կամ դրա արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների մեկնաբանման կամ կիրառման սկզբունքային հարցերի վերաբերյալ խորհրդատվական կարծիքներ տրամադրելու համար:

քացիական գործի քննության ընթացքում դատարանի կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավական հարցի կապակցությամբ վճռաբեկ ատյանից կարծիք կամ եզրակացություն ստանալու կարգը¹⁰: Ընդ որում՝ իրավական հարցի, այդ թվում՝ իրավունքի նորմի կիրառման և բովանդակության բացահայտման վերաբերյալ վճռաբեկ դատարանի եզրակացությունը ենթակա է հրապարակման Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում: Հետևաբար, Սահմանադրական դատարան դիմելու հնարավորության ամրագրումը քաղաքացիադատավարական կառուցակարգի գնահատման տեսանկյունից անհրաժեշտ և բավարար պայման է սահմանադրական իրավունկալումը բացահայտելու համար, մինչդեռ հնարավոր է կիրառվող դատավարական կառուցակարգի սահմանադրականության հարց չառաջանա, սակայն իրավունքի զարգացման և կոնվենցիոն պահանջների ու որակների անմիջական կիրառման նպատակով իրավական միատեսակություն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի իրացման անհրաժեշտություն առաջանա:

Կարծում ենք, որ ներպետական իրավական համակարգում «կենդանի գործիքի» կոնվենցիոն սկզբունքի լիարժեք իրացման նպատակով վճռաբեկ ատյանից իրավական հարցի վերաբերյալ գնահատական և եզրակացություն ստանալու գործիքակազմի ներդրումն ուղղակիորեն անհրաժեշտ է սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի իրավաչափ կիրարկումն ապահովելու համար: Վճռաբեկ դատարանն էլ՝ որպես Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյան, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի (ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդված, 1-ին մաս), կարող է նշված խնդրի լուծման համար ազատորեն օգտվել Կոնվենցիայի 16-րդ արձանագրությամբ ընձեռված հնարավորությունից:

Վերոգրյալը լրացուցիչ փաստարկ է առ այն, որ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերը դինամիկ են, իսկ քաղաքացիական դատավարության տեսակների որակական փոփոխությունները պայմանավորված են իրավունքի զարգացման գործընթացներով: Դրանք ապահովելու անհրաժեշտությունը բխում է կոնվենցիոն և սահմանադրաիրավական դրույթների կիրարկումն ապահովելու պետության պարտականությունից: Ընդ որում, որակական փոփոխությունների դինամիկան, մեր կարծիքով, հանգեցրել է քաղաքացիական դատավարության տեսակների դասակարգման դասական մոդելի արդիականության կորստի: Այսպես, իրավաբանական գրականության մեջ քաղաքացիական դա-

¹⁰ Տե՛ս «Новый Гражданский процессуальный кодекс Франции». Киев: Истина, 2004, էջ 255: Նշված փոփոխությունները կատարվել են 12 մարտի 1992 թ. № 92-228 դեկրետով:

տավարության տեսակներն ու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերն ավանդաբար ընդունված է դասակարգել երկու հիմնական խմբի՝ իրենց ենթատեսակներով. հայցային վարույթի՝ ընդհանուր հայցային և հատուկ հայցային վարույթների ենթատեսակներով, և հատուկ վարույթների¹¹: Նման դասակարգման և հայցային վարույթի առանձնացման հիմքում ընկած է հակադիր շահերով օժտված կողմերի, հայցվորի՝ խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքի և օրինական շահի մասին իրավական վեճի, հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի և գործը քննելու ու լուծելու մասին դատարանին ուղղված պահանջի միաժամանակյա առկայությունը: Հատուկ վարույթը, կապված չլինելով իրավունքի մասին վեճի հետ, չի առանձնանում հայցային վարույթին բնորոշ հատկանիշներով, իսկ վարույթի օբյեկտն այստեղ ոչ թե վեճն է, այլ քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ օրենքով պահպանվող շահերը, որպիսի պարագայում դատարանը հաստատում է անձնական կամ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստեր, անձի կամ գույքի իրավական վիճակ կամ անվիճելի իրավունք: Սակայն, իրավունքի գերակայության ապահովման կոնվենցիոն որակներով պայմանավորված, դատավարական հարաբերությունների կարգավորման դինամիկան վկայում է, որ նման դասակարգումն արդեն կորցրել է արդիականությունը, և ի հայտ են եկել քաղաքացիական դատավարության այնպիսի տեսակներ, իրավունքների պաշտպանության կառուցակարգերի այնպիսի որակներ, որոնք նման դասակարգման տրամաբանությունից դուրս են: Մասնավորապես, դասակարգման այս տրամաբանության մեջ չեն տեղավորվում վճարման կարգադրությունն արձակելու գործերի վարույթը, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը, օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը և այլն¹²: Այս վարույթները դասական հայցային և հատուկ վարույթների համեմատությամբ որակական լուրջ տարբե-

¹¹ Տե՛ս **Треушников М. К.** Гражданский процесс. М., 1999, էջ 284-289, **Ռ. Գ. Պետրոսյան**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2003, Երևանի համալսարանի հրատ., էջ 25-28:

¹² Տե՛ս ՀՀ ՔԴՕ 43-52 գլուխներ:

րություններ ունեն: Դրանք մի կողմից առանձնանում են իրավունքի մասին վեճի հնարավորությամբ, այլ ոչ թե փաստացի առկայությամբ, որը նյութաիրավական բնույթ չի կրում, այլ զուտ պրոցեսուալ իրավունքի իրականացում է ենթադրում: Մյուս կողմից՝ վարույթի այս տեսակում բացակայում են պատասխանողը, նրան ուղղված նյութաիրավական պահանջը, թեև առկա են հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցները: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, կարող է մերժվել միայն այն կողմի խնդրանքով, որի դեմ այն ուղղված է, եթե այդ կողմն ապացույցներ ներկայացնի դատարան, որտեղ հայցվում է վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը այն մասին, որ առկա են վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու՝ օրենքով նախատեսված հիմքեր: Նույնը վերաբերում է նաև արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթին, բացառությամբ՝ եթե համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին, որը պարզելու պարտականությունն ի պաշտոնե դրված է դատարանի վրա («Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված): Նշված իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ դատավարության այս տեսակներն առանձնանում են պրոցեսուալ իրավունքի մասին վեճի առկայության հնարավորությամբ, եթե կողմը որոշում է օգտվել վճռի ճանաչման և կատարման դեմ առարկելու կամ որոշել է իրացնել վճռի վիճարկման իրավունքները, սակայն փաստացի բացակայում են հայցային վարույթին բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսին պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն է կամ սուբյեկտիվ նյութական իրավունքի մասին վեճը: Այս տրամաբանությունն ընկած է նաև օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման թույլատրելու վարույթի հիմքում. չկա պատասխանող, սակայն առկա են հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցներ, ինչն էականորեն տարբերակում է սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության այս կառուցակարգի որակները:

Բացի այդ, որոշ դեպքերում քաղաքացիական դատավարությունում վարույթի իրականացումը պայմանավորված է ոչ թե սուբյեկտիվ իրավունքների անմիջական պաշտպանությամբ, այլ իրավունքի պաշտպանության ընդհանուր ընթացակարգերի և առանձին ձևերի կիրառմանն օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ: Խոսքը միջազգային հարաբերություններում քաղաքացիական գործերով իրա-

վական օգնություն ցուցաբերելու մասին է, երբ օտարերկրյա պետության իրավասու դատարանի հարցմամբ միջազգային պայմանագրերով և ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ դատարանը Հայաստանի տարածքում պետք է դատավարական գործողություններ կատարի (ՔԴՕ 60-րդ գլուխ) կամ արբիտրաժին դատական աջակցության ցուցաբերելու շրջանակներում դատարանի որոշմամբ արբիտր նշանակելու, բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու, արբիտրի պարտականությունների կատարման անհնարինության կամ չկատարման պարագայում լիազորությունները դադարեցնելու, արբիտրաժային տրիբունալի իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու, ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերին: Վարույթի այս տեսակները հարուցվում և իրականացվում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլ ձևերի շրջանակներում գործին մասնակցող անձանց իրավունքների, պրոցեսուալ կառուցակարգերի հավասարակշռման և լիարժեք իրացմանն աջակցելու, միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների իրացման հարցում համագործակցությունն ապահովելու նպատակով: Ընդ որում, իրավաբանական գրականության մեջ հատուկ ուշադրության է արժանացել այն հարցը, որ օրինական շահը վարույթի այս տեսակներում չի կարող պաշտպանության ինքնուրույն օբյեկտ լինել, քանի որ չի առանձնանում իրավական որոշակիության բարձր աստիճանով¹³: Վարույթի այս տեսակները կարող են հարուցվել միջազգային պայմանագրով կամ օրենքով նախատեսված կարգով և դեպքերում քաղաքացիական շրջանառության մասնակիցների կոնկրետ իրավունքների իրացումն ապահովելու նպատակով: Հետևաբար, դրանք չեն առանձնանում հայցային և հատուկ վարույթներին բնորոշ հատկանիշներով: Վերոգրյալը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ անհրաժեշտ է ներդնել քաղաքացիական դատավարության տեսակների և իրավունքների պաշտպանության կառուցակարգերի դասակարգման նոր համակարգ, որը համարժեքորեն կարտացոլի դրանց որակական հատկանիշները և տրամաբանորեն կփոխի դատավարության օրենքի կառուցվածքը:

Ըստ սուբյեկտիվ իրավունքի մասին վեճի, հակադիր շահերով օժտված կողմերի, պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի, խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու մասին դատարանին ուղղված պահանջի առկայության կամ բացակայության հատկանիշի՝ առավել նպատակահարմար է որպես քաղաքացիական դատավարության տեսակ առանձնացնել հայցային (ընդհանուր հայցային և հատուկ հայցային) վարույթները, հատուկ վարույթները և քաղաքացիական դատավարության տարբերակված ձևերը: Ընդ որում, ՀՀ ՔԴՕ-ով

¹³ St' u Процессуальные формы защиты субъективных прав, свобод и законных интересов в Российской Федерации: судебные и несудебные. М., 2013, էջ 15:

նախատեսված պարզեցված ընթացակարգերով գործի քննության վարույթները, բացառությամբ վճարման կարգադրություն արձակելու վարույթի, ճիշտ է դիտարկել հայցային վարույթի տարբերակված ձևերի շրջանակներում, քանի որ վարույթի այս տեսակներին բնորոշ են իրավունքների պաշտպանության հայցային ձևի բոլոր առանձնահատկությունները, սակայն դրանք առանձնանում են տարբերակված քննության դատավարական կանոններով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ «կենդանի գործիքի» կոնվենցիոն սկզբունքի իրացումը պայմանավորում է ոչ միայն սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված դատավարական կառուցակարգերի և գործիքակազմի շարունակական մշակումն ու կատարելագործումը հայրենական իրավական համակարգում, այլև կանխորոշում է քաղաքացիական դատավարության տեսակների զարգացման հիմնական օրինաչափությունները և նոր իրավընկալմամբ տարբերակված ձևերի ներդրումը:

***Բանալի բառեր** – իրավունքի պաշտպանություն, քաղաքացիական դատավարության տեսակ, կառուցակարգ, իրավընկալման փոփոխություն, իրավական պահանջ, չափանիշ, արդար դատաքննության իրավունքի տարրեր*

VAGE OGANNISYAN – Проблемы развития гражданско-правовых механизмов защиты субъективных прав и законных интересов в Республике Армения. – Основная цель правосудия – защита прав и свобод человека, которая может не исполняться в результате формальной реализации закона. Гражданско-правовые механизмы должны полноценно обеспечить эту защиту в соответствии с конвенционными и конституционными требованиями. Только гражданско-правовые механизмы, соответствующие общим и специальным конвенционным и конституционным требованиям и качествам, могут гарантировать правомерность процессуального регулирования. Законодательное регулирование считается правовым, пока Конституционный суд РА не признал гражданско-правовой механизм полностью либо частично несоответствующим конституции или Европейский суд не установил факт нарушения конвенционных положений и требований. Гражданско-процессуальные механизмы защиты субъективных прав находятся в динамике, а динамика качественных изменений исчерпала актуальность классической модели классификации гражданского процесса.

Реализация конвенционного принципа «живого инструмента» обуславливает не только непрерывную разработку и улучшение процессуальных механизмов и инструментария защиты субъективных прав, но и устанавливает основные закономерности развития типов гражданского процесса и внедрения дифференцированных форм согласно новым правовым восприятиям.

Ключевые слова: защита прав, вид гражданского судопроизводства, механизм, изменение правового восприятия, требование, критерии, элементы права на справедливое судебное разбирательство

VAGE HOVHANNISYAN – Issues on Development of Civil-procedural Mechanisms for Protection of Individual Rights and Legal Interests in the Republic of Armenia. – The primary role of justice is the protection of human rights and free-

doms as key social values that may not be achieved due to formal implementation of law. As a priority, civil procedural tools shall fully ensure the protection of human rights and freedoms as key social values strictly in line with conventional and constitutional requirements, qualities and perceptions. Effective legal protection tools and legality of procedural regulations can be ensured only through procedures compliant with general and special conventional and constitutional requirements and qualities. It should be noted that civil procedural tools of protection of rights shall be assessed by presumption of legality. Legal regulation or the fact of legally established type of proceedings are considered legal as long as the Constitutional Court of RA has not declared the civil procedural proceeding non-constitutional fully or partly, or European Court has not established the fact of violence of conventional provisions and requirements. The author takes the view that civil procedural proceedings of protection of rights are in dynamism, and the quality changes in different types of civil procedures are linked to development of law. And this necessity derives from the obligation of the state to ensure the realization of conventional and constitutional provisions. By the way, the dynamics of quality changes, according to the author, has exhausted the actuality of modern classification of the types of civil procedures.

The author has come to the conclusion that realization of the conventional principle “living tool” not only conditions continuous elaboration and amendment of procedural proceedings and tools of protection of subjective interests in national legal system, but also predicts the main peculiarities of development of the civil procedure types and implication of differentiated forms according to the new legal perceptions.

Key words: protection of rights, types of civil procedure, mechanism, change in legal perception, claim, criteria, elements of rights to fair trial